Արձանագրություն N 3
Պարբերական մամուլի ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք. Երևան

07.12.2017թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մամուլյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Պողոսյան /գնահատող/, Ա. Երմազյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Հ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Գների նվազեցման բանակցություններին անցակացման մասին
(Ն.Մամուլյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետի 5-րդ ենթակետի՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին ծանուցված մասնակիցները չեն ներկայացել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով ընթացակարգը 2-րդ և 11-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

(Ն.Մամուլյան)

2.1 Հաշվի առնելով, որ 2-րդ 11-րդ չափաբաժինների մասով /Հայկական ժամանակ/ հայտ ներկայացրած մասնակիցները չեն ներկայացել բանակցություններին՝ հանձնաժողովը որոշեց նշված չափաբաժինները հայտարարել չկայացած:

2.3 Հաստատել չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ն.Մամուլյան)

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 08.12.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն.Մամուլյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված հարցման ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Ն.Մամուլյան

Անդամներ՝ ..... Հ. Հարությունյան

..... Տ. Պողոսյան

..... Ա. Հարությունյան

..... Ա. Երմազյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան